

ԴԻԶԱԿԻ ՄԵԼԻՔ ԵԳԱՆԻ ԱՊԱՐԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՀՈՒՇԱՐՁԱՆ

Ժամկրոջյան Ա., Բաբայան Ֆ. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և  
ազգագրության ինստիտուտ, Հայաստան)  
safdav@yahoo.com

Բանալի բառեր՝ Արցախ, Տոդ ավան, Մելիք Եգան, պեղումներ,  
զբոսաշրջություն:

«Խամսայի» մելիքության վարչատնտեսական ինքնավար  
իշխանության կենտրոնը Տոդ ավանն էր, որտեղ պահպանվել է  
միջնադարի հայ իրականության խոշորագույն քաղաքական գործիչ  
Մելիք Եգանի ապարանքը: Ապարանքն իր շինություններով և ինքը՝  
Մելիք Եգանը, որպես սղնախների ղեկավար, մշտապես  
ուսումնասիրության թեմա է եղել: Այսօր չլուծված շատ  
հիմնախնդիրներ լրացվում են 2009-2011 թվականների հնագիտական  
պեղումներով: Վերջիններս իրականացվել են Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության կառավարությանն առընթեր զբոսաշրջիկության  
վարչության նախաձեռնությամբ և պատվերով: Նպատակը՝ Արցախի  
XVII-XVIII դդ. վերաբերող մելիքական տների հետ կապված  
ճարտարապետական, հնագիտական, ազգագրական և քաղաքական  
խնդիրների լուսաբանումն է:

Մելիքների ապարանքները, իրենց տեղադրությամբ և  
շինարարական հնարանքներով, ներկայացել են իբրև  
պաշտպանական, ռազմական հենակետ, իբրև փոքր ամրոց: Մելիք  
Եգանի ընդունարանը (1736 թ.) նմանատիպ կառույց է: Հայաստանի  
շատ շրջաններում, ինչպես նաև Տոդ գյուղում, բնակարանային  
հիմնական տիպը եղել է գլխատունը, շրջապատված գոմ, թոնրատուն,  
մթերանոց և այլ բաժանմունքներով: Ընդունարանից ոչ հեռու,  
հողակույտերի միջից հայտնաբերվել է այդպիսի մի քառանկյուն  
դահլիճ՝ գլխատուն: Այն ունի մուտք, կրաքարե սալերից մշակված  
խարիսխներ, օջախ և հարավ-արևմտյան պատի կենտրոնում

պահպանված բուխարիի հետքեր: Նույն դարաշրջանում և հետագայում տեղի է ունենում բնակելի տների ձևափոխություն, որը հստակ երևում է ապարանքից հարավ բացված աշխարհիկ համակառույցում: Այն թաղածածկ տանիքով ուղղանկյուն սրահ է, որն իր վրա է կրել տարբեր ժամանակների շինարարական նոր լուծումների հետքեր: Բնակարանում առաջնային տեղ է հատկացված կամարածև պսակով պահարանախորշերին, բուխարուն և հատակագծային նոր լուծումներով տեղադրված դուռ-պատուհաններին: Նման կառույցների առկայությունը թելադրված է եղել սոցիալ-տնտեսական կյանքի փոփոխություններով: Մեծ ընտանիքները տրոհվել են և կենցաղավարման նոր փուլերում տեղափոխվել են բնակության նոր միջավայր: Մելիք Եգանի պալատական համալիրի սրբատաշ քարերով շարված կամարակապ շքամուտքը (1731 թ.) տանում է բակի խորքում տեղադրված ուղղանկյուն հատակագծով բնակելի մեծ հյուրասենյակ, որն ունի քանդակազարդ բուխարի, փոքր պատուհաններ, երկայնական պատի մեջ փորված կամարածև լայն խորշեր՝ բակահայաց պատուհաններ և այլ մանրամասներ: Տնտեսական հարկաբաժնի առկայությունն են հաստատում հյուրասենյակից առանձնացած ուղղանկյուն հատակագծով թաղակիր սենյակները՝ ճարտարապետական մանրամասներով, թոնիրներով, կարասներով: Մելիք Եգանի պալատական համալիրի պահպանված փոքր մասը վերակառուցումների հետևանքով կորցրել է իր նախնական տեսքը, սակայն շինության պատերին պահպանված (Եգանի որդի բարուն Արամ՝ 1737 թ. և Արամ բեկ Մելիք Եգան՝ 1904 թ.) արձանագրությունները հաստատում են, որ շուրջ 200 տարի ապարանքը պատկանել է մելիքական տոհմի ներկայացուցիչներին, որոնք հերոսաբար շարունակել է պայքարել հայրենիքի ազատության համար:

Մելիք Եգանի ապարանքը ճարտարապետական ինքնատիպ և բազմաշերտ հուշարձան է՝ XVI-XVIII դդ. պատկանող հնագիտական նյութերով, որոնք համադրվում են Հայաստանի, նաև Սեֆյան

Պարսկաստանի, Օսմանյան Թուրքիայի, Միջին Ասիայի  
համաժամանակյա նյութերի հետ:

Ապարանքի վերականգնումը և նրա վերածումը  
զբոսաշրջիկության կենտրոնի կարևոր քայլ է, որով հասարակությանը  
վերջապես ներկայացվելու են XVIII դարի հայ ազատագրական  
շարժման հերոսական էջերը:

MELIQ YEGAN'S PALACE IN DIZAK AS A HISTORICAL-ARCHAEOLOGICAL  
MONUMENT

Zhamkotchyan A., Babayan F. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of Archaeology and Ethnography, Armenia)